09.10.25 - 10.10.25
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ

Ս.թ. հոկտեմբերի 9-10՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ գիտխորհրդի նիստերի, ապա Պալեանների անվան դահլիճներում Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախաձեռնությամբ կանցկացվի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» խորագրով ամենամյա երկրորդ գիտաժողովը։ Այս տարի գիտաժողովն ունի «Հետխորհրդային փոխակերպումներ. աշխարհաքաղաքականություն, ազգաշինություն և զարգացում» ենթախորագիրը։

Օրակարգը՝ այստեղ:

Հայտադիմումներն ընդունվում են միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության բոլոր բնագավառներից։

Գիտաժողովի աշխատանքային լեզուն անգլերենն է։

Հայտադիմումն անհրաժեշտ է .doc, .docx կամ .pdf ձևաչափով ուղարկել **conference.int.rel@ysu.am** էլհասցեին։

Կարևոր ժամկետներ

- Զեկուցումների ներկայացման վերջնաժամկետը՝ **մայիսի 31, Երևանի ժամանակով (GMT+4)**
- Հանձնաժողովի որոշման մասին ծանուցումը՝ **հունիսի 25**
- Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ **սեպտեմբերի 1**
- Գիտաժողովի ծրագրի հրապարակումը՝ **սեպտեմբերի 15**

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է գտնել այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000
info@ysu.am